ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. № 728

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-042-0017-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,102 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1009879 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042ERISYHS) և Արցախ Հայկի Մազմանյանի (ծնված՝ 02.02.1990թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում գտնվող 06-042-0017-0031 կադաստրային ծածկագրով 0,102 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 80,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի նկուղին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Լեռնավան, 2-րդ փողոց, 11 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1811):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026 թ. № 729

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-030-0031-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17072023-06-0010 վկայականը և Արտակ Ալբերտի Խաչատրյանի (ծնված՝ 25.09.1963թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Արտակ Ալբերտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-030-0031-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026 թ. № 730

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-095-0090-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1248 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07042022-06-0011 վկայականը և Լևոն Զալիվոսի Մխիթարյանի (ծնված՝ 04.11.1955թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Լևոն Զալիվոսի Մխիթարյանին, Լաուրա Հրաչիկի Ասատրյանին, Արտակ Լևոնի Մխիթարյանին և Արթուն Լևոնի Մխիթարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Ջրաշեն 9-րդ փողոց, 42 հողամաս» հասցեում գտնվող, 06-095-0090-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը:

2. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0090-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը հաստատելու եվ Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 24-ի «Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0090-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հատակագիծը հաստատելու մասին» թիվ 692 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1248 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. № 731

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրված «Մարզ Լոռի, համայնք Մեծ Պարնի Թռչկանի փողոց 15 հողամաս» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20052021-06-0054 վկայականը, գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-10062026-06-0170 որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06132HDE77B9)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի առկա «Մարզ Լոռի, համայնք Մեծ Պարնի Թռչկանի փողոց 15 հողամաս» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, գյուղ Մեծ Պարնի, 12 հողամաս» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. № 732

ԿԱՐԵՆ ՀԵՆՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Նարինե Սահակյանի կողմից 2026 թվականի հունիսի 23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ Կարեն Հենրիկի Պողոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին՝ ***որոշում եմ.***

1. Կարեն Հենրիկի Պողոսյանի կողմից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2026 թվականի հունիսի 29-ին, ժամը 10:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Կարեն Հենրիկի Պողոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. № 733

ԶԻՆԱ ԳԻԼՄԱՆԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 19-ի թիվ 84-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 20-ի թիվ 106 որոշման հիման վրա 2003 թվականի նոյեմբերի 17-ին տրված բնակելի տարածության թիվ 13 օրդերը և Զինա Գիլմանի Կուրղինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052026-06-0086 վկայական) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Ս. Շահումյան փողոց 40 շենք, 13 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Զինա Գիլմանի Կուրղինյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Զինա Գիլմանի Կուրղինյան - ինքը՝ ծնված 03.11.1958 թվականին,
   2) Ռուստամ Ռուբիկի Մելքոնյան - տղան՝ ծնված 03.07.1984 թվականին,
   3) Սամարա Ռուբիկի Կուրղինյան - աղջիկը՝ ծնված 20.04.1992 թվականին,
   4) Լևոն Ռուբիկի Կուրղինյան - տղան՝ ծնված 07.10.1993 թվականին:
2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026թ. № 734

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 145-Ն որոշման 8-րդ կետով 2026 թվականի հունիսի 8-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների թիվ 22/25 ընտրական տեղամասի համար տարածք վարձակալելու նպատակով՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2026 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածից 120 000 ՀՀ դրամ տեղափոխել նույն գործառական դասակարգման «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման 4216 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հունիսի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026թ. № 735

ՆԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԴԻԿՅԱՆԻՆ ՎԱԶԳԵՆ ԿԱՐԵՆԻ ԳԱՍՈՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 37-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Նարինե Սամվելի Բադիկյանի դիմումը, թիվ ԼԴ/0095/02/26 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի ապրիլի 17-ի վճիռը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 24-ի եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Նարինե Սամվելի Բադիկյանին (ծնված 04.04.1983թ.) նշանակել Վազգեն Կարենի Գասոյանի (ծնված 10.03.2005թ.) խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026թ. № 736

06-021-0012-0053 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04515 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող 06-021-0012-0053 կադաստրային ծածկագրով 0,04515 հեկտար մակերեսով հողամասի վրա 2003 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան 1-ին հարկի, բաց պատգամբի, 2-րդ հարկի և աստիճանահարթակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1010583 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2026ZEWZ2P, «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 2026 թվականի հունիսի 16-ի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-16062026-06-0276 որոշումը և Ռուբեն Լիպարիտի Մակարյանի (ծնված՝ 22.08.1963թ.) դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող, 06-021-0012-0053 կադաստրային ծածկագրով 0,04515 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 110,80 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 2,80 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (2-րդ հարկ) և 11,30 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան նկատմամբ ճանաչել Ռուբեն Լիպարիտի Մակարյանին, Նարինե Նվերի Ադամյանին, Լիպարիտ Ռուբենի Մակարյանին, Թերեզա Ռոբերտի Մակարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Ռուբեն Լիպարիտի Մակարյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 129 230 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«24» հունիսի 2026 թ. № 737

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԻՆԵ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 0,00124 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Արմինե Արշալույսի Ժամհարյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, 06-075-0131-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,10124 հեկտար մակերեսով հողամասի 0,1000 հեկտարը Արմինե Արշալույսի Ժամհարյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,00124 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1991 թվականին կառուցված բնակելի տունը, աստիճանահարթակը և անասնաշենքը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06132DQUXKW9) և Արմինե Արշալույսի Ժամհարյանի (ծնված՝ 26.05.1963 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Արմինե Արշալույսի Ժամհարյանի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, 06-075-0131-0009

կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1000 հեկտար մակերեսով հողամասի և 7,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 83,5 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 2,8 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի և 36,4 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի նկատմամբ:

2. Արմինե Արշալույսի Ժամհարյանի կողմից տիրապետվող 0,10124 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,00124 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 4 173,84 ՀՀ դրամ (1 քմ 336,6 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արմինե Արշալույսի Ժամհարյանին:

3. Արմինե Արշալույսի Ժամհարյանի կողմից տիրապետվող 06-075-0131-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,10124 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Մեծ Պարնի, 13-րդ փողոց, 6 բնակելի տուն » հասցեն:

4. Հաստատել Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող, 06-075-0131-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,10124 հեկտար հողամասի և շինությունների հատակագիծը:

5. Արմինե Արշալույսի Ժամհարյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026թ. № 738

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-061-0215-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,02385 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 5-ի թիվ 40-Ա որոշումը, ՀՀ Կադաստրի կոմիտեի 2026 թվականի մայիսի 6-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-06052026-06-0218 որոշումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28032025-06-0041 վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-061-0215-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,02385 հա մակերեսով արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության:
2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 24
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2026թ. № 739

ԴԱՎԻԹ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 19-ի թիվ 84-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 20-ի թիվ 106 որոշման հիման վրա 2003 թվականի նոյեմբերի 17-ին տրված բնակելի տարածության թիվ 3 օրդերը և Դավիթ Ռաֆիկի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052026-06-0087 վկայական) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Ս. Շահումյան փողոց 40 շենք, 3 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Դավիթ Ռաֆիկի Հարությունյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Դավիթ Ռաֆիկի Հարությունյան- ինքը՝ ծնված 27.09.1960 թվականին,
2) Կարինե Վոլոդի Միքայելյան - կինը՝ ծնված 15.07.1966 թվականին,
3) Էդգար Դավթի Հարությունյան - տղան՝ ծնված 05.07.1987 թվականին,
4) Նորայր Դավիթի Հարությունյան - տղան՝ ծնված 07.12.1988 թվականին,
5) Լիանա Դավթի Հարությունյան - աղջիկը՝ ծնված 08.05.1992 թվականին,
6) Նինա Գարեգնի Հարությունյան- մայրը՝ ծնված 11.02.1938 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2026թ. № 740

ԳՐԻԳՈՐ ՋԱՔԱՐԻ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 115-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 183 որոշման հիման վրա 2002 թվականի դեկտեմբերի 8-ին տրված բնակելի տարածության թիվ 244 օրդերը և Գրիգոր Զաքարի Սիսակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09112023-06-0054 վկայական) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շ. Թորոսյան փողոց 4/2 շենք, 6 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Գրիգոր Զաքարի Սիսակյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Գրիգոր Զաքարի Սիսակյան - ինքը՝ ծնված 16.04.1958 թվականին,
   2) Թագուհի Կառլենի Հովակիմյան - կինը՝ ծնված 31.01.1959 թվականին,
   3) Գայանե Գրիգորի Սիսակյան - աղջիկը՝ ծնված 07.09.1984 թվականին,
   4) Լուսինե Գրիգորի Սիսակյան - աղջիկը՝ ծնված 28.04.1986 թվականին,
   5) Ջեմմա Գրիգորի Սիսակյան - աղջիկը՝ ծնված 26.06.1992 թվականին:
2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2026թ. № 741

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 148 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 30-ի թիվ 148 որոշման մեջ Գայանե Սերոժի Մամյանի (ծնված՝ 24.01.1959թ.) հայրանունը սխալմամբ գրվել է «Սերյոժայի», հիմք ընդունելով Գայանե Սերոժի Մամյանի անձնագրային տվյալները և Գայանե Սերոժի Մամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 30-ի «Սպիտակ քաղաքի պետական բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» թիվ 148 որոշման մեջ գրված «Սերյոժայի» բառը փոխարինել «Սերոժի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2026թ. № 742

ԱԼՎԱՐԴ ՄԻՇԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 18-ի թիվ 106-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 183 որոշման հիման վրա 2002 թվականի դեկտեմբերի 8-ին տրված բնակելի տարածության թիվ 96 օրդերը և Ալվարդ Միշիկի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16062026-06-0020 վկայական) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Ա. Մանուկյան փողոց 1-ին նրբանցք 11/2 շենք, 10 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Ալվարդ Միշիկի Պողոսյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Ալվարդ Միշիկի Պողոսյան - ինքը՝ ծնված 06.11.1969 թվականին,
2) Հովհաննես Սուրենի Ղազանչյան - ամուսինը՝ ծնված 27.11.1970 թվականին,
3) Սուրեն Հովհաննեսի Ղազանչյան - տղան՝ ծնված 24.08.1994 թվականին,
4) Լիդա Հովհաննեսի Կազանչյան- աղջիկը՝ ծնված 31.10.1997 թվականին,
5) Թամարա Միշիկի Պողոսյան - քույրը՝ ծնված 29.05.1973 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ. հունիսի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունիսի 2026թ. № 743

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԵՆԻ ԳՐԻՇԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ԱՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10062026-06-0040 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի բաժանումից կամ միավորումից առաջացող հասցեի հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011DDGTQZK, 06011B5PWTAP) և Դոնարա Կարենի Գրիշկյանի դիմումը (ծնված՝ 19.07.2003թ.) ***որոշում եմ.***

1. Դոնարա Կարենի Գրիշկյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0272-0008 կադաստրային ծածկագրով առանձին գույքային միավորների բաժանված 0,03058 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ն. Աճեմյան փողոց, 6 հողամաս» հասցեն, իսկ 0,03839 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ն. Աճեմյան փողոց, 6/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված առանձին գույքային միավորների բաժանված անշարժ գույքերի հատակագծերը:

3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2026թ.հունիսի 25
ք.Սպիտակ